ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0936-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Սամվել Նորիկի Ղումաշյանի (ծնված՝ 02/09/1954թ) դիմումը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N-2 որոշումից քաղվածքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. ***որոշում եմ.***

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղում գտնվող 06-070-0062-0074 կադաստրային ծածկագրով 0,12609 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Օրենքի ուժով ճանաչել Սամվել Նորիկի Ղումաշյանի (ծնված՝ 02.09.1954 թ), Գայանե Սուրենի Խառատյանի (ծնված՝ 20.06.1961թ.), Աննա Սամվելի Ղումաշյանի (ծնված՝ 08.01.1979թ.), Ժաննա Սամվելի Ղումաշյանի (ծնված՝ 21.03.1980թ.) և Լուսինե Սամվելի Ղումաշյանի (ծնված՝ 26.11.1982թ) համատեղ սեփականության իրավունքը 06-070-0062-0074 կադաստրային ծածկագրով 0,12 հա և հատկացվածից ավել 0,00609 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. 06-070-0107-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 8-րդ փողոց, 56/2 հողամաս փոստային հասցե:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

02 սեպտեմբերի 2025, գ. Փամբակ